հալածող հակասական մտքերը եւ յանկարծ, աչքերիս առջեւ ճեղքուող Արագածի գագաթը՝ քայլերիս տակ տենդ դրին, ու լայնատարած դաշտը երերաց:

Ելեքտրական հոսանքի նման, մի առ մի, մէջս արթնանում էին դաղտնի, գրեթէ բնազդական բնոյթ կրող ապրումներ: Ուզում էի, որ ամէն ինչ շարժուի, ապրի ներուժ կեանքով, ցնցուի, արագօրէն կայծկլտի: Տաժանելի է այդ զգացումը: Մեծ այդ բացը քո եւ շրջապատող միջավայրի միջեւ: Հոգուդ եռացող տաղը եւ ջուրի վրայ տատանուող գորտի դիակը: Տենդը եւ սառոյցը: Ծփող ալիքը եւ լռակեաց ժայռը:

Քայլերս արագացրի՝ ուզում էի ինքս ինձմէ փախչել: Ճակատս տուի հովին ու հարբածի նման առաջացայ:

Մէկ էլ, ահա, հեռուից, Հռիփսիմէի եկեղեցին:

Կանգ առի:

Կանգ առի, ինչպէս կանգ է առնում խիտ ցի անտառ անցնող՝ անյայտ ճայնի առջեւ: Զգիտես՝ ո՞ր կոմից է գալիս. մո՞տ է, հեռո՞ւ է, մա՞րդ է, տեսի՞լք է: Խոր երաժշտութեան նման կլանում էր ամբողջ էութիւնս: Մի ինչ որ իմաստի առջեւ հարցական մի նշան դնում: Եւ սակայն, այնքա՞ն ներկայ էր, այնքա՞ն կենդանի: Արարատի մօտ, հսկայ, անդրաշխարհային այդ ներկայութեան առջեւ, նա կարողանում էր ապրել ուրոյն կեանքով, նա է՛ր: Ու միեւնոյն ժամանակ այնքա՞ն լուռ, այնքա՞ն ամփոփուած եւ պարզ, որ կարծես չկար: Կար եւ չկար: Ապրում էր եւ գոյութիւն չունէր: Ցիշատա՞կ էր, տեսի՞լք:

Մտայ բակը: Մարդ չկար: Մօտեցայ զանգակատան, խարխուլ մի սանդուխ էր դրուած: Բարձր, աստիճանները կոտրտած, անձրեւներից մաշուած մի սանդուխ: Բարձրացայ: Ամէն մի աստիճանի հետ Արարատը հետս մագլցում էր եւ դաշտը վար գլորուում, բացուում, չունչ առնում, թոքերը հովին տալիս եւ լեռների մէջ երերում:

Վերը, զանգակների չուանները կախուել էին մեռած օձերի նման: Ամէն ինչ սոսկալիօրէն լուռ էր: Լայնատարած դաշտը, լեռները, եկեղեցիները, տները կանգ էին առել անհունի առջեւ պապանձուած:

Անհանգիստ, չորս կողմս դարձայ՝ ոչ մի կեանքի նշան: Երբեմն հովի խուլ մռնչիւնը անցնում էր պատերի վրայից՝ անտարբեր քարերը քերելով, եւ ամէն ինչ նորից իջնում էր վիհ: Փորձեցի կանչել՝ ոչ մի պատասխան: Զայնս փետուրի նման անհետանում էր տարածութեան մէջ, եւ ես մնում էի սոսկալիօրէն միայնակ: Մի՛նակ: Վախեցայ: Արդեօք երազ չէ՞ր: Ամէն ինչ հեռաւոր յիշատակի նման, գիտակցութեան մշուշի միջից, արթնանում էր իմ մէջ եւ յարդի տակ վառուող կրակի պէս մարում:

Տարակոյս չկար, ես գտնուում էի երեւակայական մի երկրում: Շօշափում էի քարերը, ոտքերս զգնում տեղին — ողջ էի: Իսկապէս ո՞ղջ էի: Նորից կանչեցի: Լռութիւն: Ուզեցի չուտ իջնել, բայց վերեւից սանդուխը այնքա՞ն բարձր եւ այնքա՞ն խարխուլ երեւցաւ, որ կանգ առի:

Կարելի՞ բան է, որ այս լայնատարած դաշտի մէջ կեանքի եւ ոչ մի նշան երեւնայ:

Բակի չէնքի պատուհանները նայում էին պարապ աչքերով: Հեռուում, Գայանէի վանքը թաղուել էր մի փունջ լոյսի տակ եւ էջմիածնի տանիքների վրայ մամուռ էր բուսել:

Ցանկարծ, ուշադրութիւնս գրաւեց մեծ զանգակը: Անշարժ կախուել էր, ու սեւ, անդընդային իր աչքը յառել ինձ վրայ: Զուանը ձեռքս առի ու սկսեցի ամբողջ ուժով զանգը տալ: Զանգակատունը լեցուեց պղնձէ զօղանջով: Զայները պայթեցին եւ օդի մէջ հառաչելով մագլցեցին: Կանգ առի, յոգնած: Շուրջս նայեցի՝ մարդ չկար: Դաշտը, լեռները, եկեղեցիները լուռ էին ինչպէս առաջ: Ուրեմն...

Այլեւս սարսափած վար իջայ եւ բակից դուրս նետուեցի: Փողոցի դռան մօտ հասած ժամանակ, փոքրիկ չէնքից մի աղջիկ գլուխը դուրս հանեց, անտարբեր նայեց ինձ եւ նորից անհետացաւ: Մա՞րդ կայ եղել թաղուած այդում:

Թաղուած այդում...

* * *

Այդպէս էր այն ժամանակ:

Հիմա՞... Հիմա գնում եմ բոլորովին տարբեր տրամադրութիւններով: Ուրիշ աշխարհից եկած դէպի ուրիշ աշխարհ:

Էջմիածինը գեղագիտական հնութիւն չէ

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան